ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 13

քաղ. Մարտունի 16-ը սեպտեմբերի 2025 թ.

Հայաստանի Հանրապետության Մարտունու համայնքապետարանը, մի կողմից, ի դեմս (այսուհետ՝ գործատու) աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանի և Լիլիթ Անդրանիկի Աբրոյանը (ծնվ.՝ 1994 թ. հունվարի 23-ին, նույնականացման քարտ՝ 011337755, տրված 02.09.2021 թ. 043–ի կողմից) մյուս կողմից (այսուհետ՝ պաշտոնակատար) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Գործատուն հանձնարարում է, իսկ պաշտոնակատարն ապահովում է Մարտունու համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.2-5) պաշտոնի անձնագրով սահմանված պահանջների ճշգրիտ և ժամանակին կատարումը:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կողմերն ունեն «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքներ և պարտականություններ:

III. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

3. Գործատուն պաշտոնակատարին վճարում է ամենամսյա աշխատավարձ 218000 (երկու հարյուր տասնութ) ՀՀ դրամի չափով:

IV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում կողմերը կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

5. Սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են համայնքային ծառայության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև դատական կարգով:

6. Սույն պայմանագիրը լուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգով նախատեսված դեպքերում:

7. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

8. Սույն պայմանագիրը գործում է ստորագրման պահից՝ մինչև հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատակցի վերադարձը:

9. Սույն պայմանագրում փոփոխություններ կարող են կատարվել կողմերի միջև գրավոր համաձայնագիր կազմելու միջոցով, որը կազմում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

10. Սույն պայմանագիրը կնքվել է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Պայմանագրի կողմերը՝

Գործատու՝ _____ (ստորագրությունը)

Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝
Սվետլանա Հովհաննիսյան

Կ.Տ.

Պաշտոնակատար՝ _____ (ստորագրությունը)

Լիլիթ Անդրանիկի Աբրոյան